Ս. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԲԵՐԴԸ X—XI ԴԱՐԵՐՈՒՄ

Անբերդի մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է XI դարի սկզբին։ Նախորդ ժամանակաշրջանների վերաբերյալ գրավոր աղբյուրների բացակայությունը խիստ դժվարացնում է որոշակի խոսել այդ մասին։

3-րդ և 2-րդ հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհը ծածկվեց, այսպես կոչված, կիկլոպյան ամրոցների խիտ ցանցով։ Այդ ժամանակվա մարդիկ հաճույքով էին բնակեցնում լեռնաշխարհի բարձրադիր վայրերը և իրենց ամրոցները մեծ մասամբ կառուցում էին երկու գետերի միախառնումից առաջացած հրվանդանների վրա։ Այս տեսակետից Անբերդի դիրքը միանգամայն նպաստավոր էր։ Նրա պարսպապատերի մեջ հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան մասերում պահպանվել են շարքեր, որոնք հիշեցնում են վերոհիշյալ կիկլոպյան կառույցները։ Անբերդից ընդամենը 4 կմ արևելք գտնվող կիկլոպյան ամրոցի դիրքը շատ ավելի աննպաստ է, քան Անբերդինը, և վերջապես Անբերդի շրջապատում գտնվող ուրիշ նման ամրոցների առկայությունը, կարծեք թե, կասկած չի թողնում, որ Անբերդը նույնպես եղել է կիկլոպյան ամրոց։

Անբերդի հնագիտական պեղումները այս հարցի առթիվ տվել են միանգամայն բացասական արդյունքներ։ Միջնադարյան շերտից ներքև ոչ մի կուլտուրական շերտ մինչև այժմ հնարավոր չի եղել հայտնաբերել։ Հավաքովի (подъемный) նյութը նույնպես ոչինչ չի տալիս այս շրջանի համար[1]։

Ուսումնասիրողներից Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին և ուրիշները Անբերդը համարել են նախնադարյան կամ նախաքրիստոնեական ժամանակներում կառուցված[2]։

Անբերդի հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ վաղ միջնադարում նույնպես Անբերդում բնակություն չի եղել։

Անբերդի բարձր լեռնային դիրքը (ծովի մակերևույթից շուրջ 2300 մ բարձր), նրա կտրվածությունը կարևոր ճանապարհներից, ինչպես նաև նրա խստաշունչ կլիման, մարդու մշտական բնակության համար հարմար չեն։ Այդ է պատճառը, որ ոչ միայն անցյալի շատ ժամանակաշրջաններում, այլև այժմ, այն անմարդաբնակ է։ Երկրի նորմալ պայմաններում Անբերդը բնակեցվել չէր կարող։ Նրա բնակեցումը հնարավոր էր միայն կիկլոպյան ամրոցների դարաշրջանում, երբ, ինչպես նշեցինք, նման վայրերը հաճույքով էին բնակեցվում։ Նրանից հետո եկող ամբողջ երկու հազարամյակների ընթացքում, մինչև Բագ-

---

1 Այս հարցը միշտ էլ զրաղեցրել է ուսումնասիրողներին, այդ է պատճառը, որ թե՛ 1936 թ. և թե՛ 1964 թ. հատուկ պեղումներ են կատարվել ամրոցի այն մասերում, ուր ամենից ավելի հավանական էր կիկլոպյան կառույցներին վերաբերող շերտի առկայությունը։ Սակայն պեղումները մինչև մայր հող հասնելը նման շերտ հայտնաբերել չեն կարողացել։

2 Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 114։

բատունիների թագավորությունը, Անբերդը անմարդաբնակ է եղել։ Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի կիկլոպյան ամրոցներից շատերը ուրարտական կամ նախաուրարտական շրջանից հետո ամայացել են երկար ժամանակով, և միայն X դարից սկսվում է նրանց մասսայական բնակեցումը[3]։ Ընդհանրապես պետք է նկատել, որ ամրոցաշինությունը Հայաստանում լայն ծավալ է ստանում սկսած X դարից։ Դա ելնում էր երկրի քաղաքական, ռազմական և տնտեսական կացությունից։ Բանն այն է, որ Արշակունյաց, ինչպես և նրանից հետո եկող մարզպանական շրջանում Հայաստանը կարողանում էր 70—80 հազարանոց բանակներ հանել։ Հայերը ի վիճակի էին թշնամուն բաց դաշտում երկրի սահմանների մոտ ճակատամարտեր տալու և շատ անգամ ստիպելու նրան չմտնել երկրի խորքը։ Հիշենք Զիրավի, Խաղխաղի, Ավարայրի ճակատամարտերը։

Այլ էր վիճակը Բագրատունյաց շրջանում (արաբական շրջանի մասին չենք խոսում, քանի որ երկիրը նրանց իշխանության տակ էր)։ Բոլոր ճակատամարտերը այժմ տեղի էին ունենում արդեն ամրոցների օգնությամբ, նրանց շուրջը (այստեղ մենք նկատի ունենք նաև Անի մայրաքաղաքի և մյուս քաղաքների հզոր պարսպապատերը, որպես ամրոցներ)։ Արժե հիշել, որ բյուզանդական զորքերի դեմ վճռական ճակատամարտերը տրվում էին մեծ մասամբ

---

3 Պեղվող հուշարձաններից Լճաշենում և Ն. Արմավիրում հետևյալ պատկերն է. ուրարտական շերտի վրա անմիջապես նստած է միջնադարյան շերտը, որը թվագրվում է երկու տեղում էլ ոչ շուտ քան X դարը։

ոչ թե սահմանին մոտ, այլ հենց Անի մայրաքաղաքի պարիսպների տակ[4]։ Ճակատամարտերն էլ արդեն առաջվա մասշտաբները չունեին։ Բագրատունի թագավորները կարողանում էին հանել մինչև 30 հազարանոց զորք։

Բագրատունի թագավորներն, սկսած Աշոտ Երկաթից, երբ վերջապես հնարավոր եղավ վտարել արաբներին Հայաստանից, ամեն կերպ ամրացնում էին երկիրը։ Հսկայական չափերի հասավ այս շրջանում ամրոցաշինությունը։ Ամրացվում էին հին ամրոցները, կառուցվում էին նորերը, երկրի վրա անընդհատ կախված արաբական արշավանքների վտանգը ստիպում էր հայերին վերաշինել նաև կիկլոպյան ամրոցներ։ Ամրոցներ կառուցվում էին նաև բարձր լեռնային շրջաններում։

Մեր վերը բերած փաստերը ոչ մի կովան չեն տալիս հաստատելու Անբերդի նախորդ շրջաններում գոյության հարցը։ Գոյություն ունե՞ր Անբերդ ամրոցը մինչև Բագրատունիների թագավորությունը։ Դժվար է ասել։ Դեռ ավելին. Բագրատունյաց թագավորության սկզբնական շրջանում, մինչև X դարի առաջին տասնամյակները, եթե գոյություն ուներ Անբերդը, ապա այն սովորական բնակավայր էր և ոչ թե հզոր ամրոց։ Այդ բանը պարզ է դառնում Դրասխանակերտցու անուղղակի վկայություններից։

Նա պատմում է, թե ինչպես արաբներից հալածվելով, ապաստանում է նախ Այրիվանքում, ապա Սևանում և հետո գալիս է իր «ձեռակերտ ամրոցիկն Բյուրական»։ Այնուհետև, իմանալով, որ արաբները Բյուրականում էլ իրեն հանգիստ չեն տալու, հեռանում և գնում պատսպարվում է Բագարանում։ Արաբները հարձակվում են Բյուրական ամրոցի վրա։ Յոթ օր ամրոցականները համառ դիմադրություն են ցույց տալիս, սակայն արաբները կարողանում են գրավել, հիմնահատակ կործանել այն և կոտորել բնակիչներին։ Բյուրականի ավարը առած նրանք գնում են Դվին[5]։

Այս ամրոցից այժմ ոչ մի հետք չի մնացել, սակայն Դրասխանակերտցու կառուցած «Հաստահեղոյս կոփածոյ քարամբք, պերճապաճոյճ պճնողութեամբ նկարակերտ յօրինուածով» եկեղեցին մինչև այժմ էլ կանգուն է և գտնվում է Բյուրական գյուղում։ Սրա շրջապատում էլ եղել է ամրոցը, որը Անբերդից գտնվում է ընդամենը 6—7 կմ հեռավորության վրա։ Այս հանգամանքը ստիպում է կարծելու, որ Բյուրական ամրոցի գրավման և կործանման ժամանակ Անբերդ ամրոցը գոյություն չուներ, կամ արդեն ավերակ էր։ Նախ, եթե այն գոյություն ունենար, դժվար թե կաթողիկոսը իր գանձերը տաներ Բյուրական և ապաստաներ Բյուրականում։ Այնուհետև, Անբերդը չէր կարող անտարբեր ականատես լինել Բյուրականի ճակատագրին։ Հարկ է նշել, որ Բյուրականի շրջապատի զորականները, լսելով արաբների նպատակը Բյուրականը գրավելու մասին, «...դիմեալք ուստեք ուստեք մտանէին յամրոց անդր թիկունս տալ հաւատացեալացն մինչ ի կէտ մրցման մահու»[6]։ Այստեղ նույնպես

---

4 Պատահական չէ Բագրատունիների Անին մայրաքաղաք դարձնելը։ Երկար որոնումներից հետո նրանք կանգ առան Անի ամրոցի վրա։ Դա պայմանավորված էր նախ Անիի դիրքով։ Դաշտավայրում գտնվող մայրաքաղաքները՝ Դվինը, Վաղարշապատը, Արտաշատը և ուրիշներ չունեին Անիի անառիկությունը։ Հատկանշական է նաև, որ Անին մայրաքաղաք դառնալուց հետո պատրաստվեց շատ հոսպի և ամուր պարիսպներով, որպիսիք չունեին մեր մայրաքաղաքներից և ոչ մեկը։

5 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 336—337։

6 Նույն տեղում, էջ 341։

չի նշվում Անբերդի անունը։ Վերջապես, Բյուրականը գրավելուց հետո արաբները չէին կարող չգրավել Անբերդը, եթե այն գոյություն ունենար։

Բյուրականի ամրոցի ավերումը վերաբերում է X դարի սկզբին։ Դրանից հետո այն չի վերականգնվում։ Սրանից հետո է միայն, որ հանդես է գալիս Անբերդ ամրոցը, և մեզ թվում է, թե դա պատահական չէ։ Հաշվի առնելով նախորդ փորձը, այս անգամ ամրոցը կառուցվում է ավելի անառիկ վայրում՝ Բյուրականից հյուսիս երկու գետերի միախառնումից առաջացած հրվանդանի վրա։ Դրանից հետո Բյուրականի ամրոցը այլևս չի հիշատակվում։ Անբերդի առկայությունը, հավանաբար, ավելորդ էր դարձնում Բյուրականում ամրոց ունենալը։ Այդ է պատճառը նաև, որ XI դարում եպիսկոպոսական աթոռը Բյուրականից տեղափոխվում է Անբերդ։

Այժմ հետաքրքիր է պարզել, թե Բյուրականի կործանումից ինչքան ժամանակ հետո կառուցվեց Անբերդը։

Հայաստանի միջնադարյան ամրոցներից շատերը ժողովուրդը կապում է Աշոտ Երկաթի անվան հետ։ Անբերդը նույնպես կոչվում է Աշոտ Երկաթի բերդ։ Ժողովուրդը Արխաշանի ձորի մեջ ցույց է տալիս ժայռի վրա փոս ընկած մի տեղ, որը, ըստ ավանդության, Աշոտ Երկաթի ոտքի տեղն է։ Աշոտ Երկաթի անվան բերդեր շատ են հայտնի Հայաստանում, և բոլոր բերդերը կառուցված են միջնադարում։

Ընդունված կարծիք է, որ այդ բոլոր բերդերից և ոչ մեկն էլ Աշոտ Երկաթը չի կառուցել և որ, առհասարակ, ոչ մի առնչություն չեն կարող ունենալ Աշոտ Երկաթի հետ։ Մեծ մասամբ դա բացատրում են նրանով, որ Աշոտ Երկաթը ժամանակ և միջոց չուներ ամրոց կառուցելու համար։ Մենք նման պատճառաբանության համաձայն չենք։

Նախ, ժողովրդական ավանդություններն ու զրույցները անպայման որևէ հիմք կունենան, չի կարելի դրանք ժխտել առանց հակառակ փաստ ունենալու և այն ապացուցելու։ Անշուշտ, ժողովրդական ավանդությունների և զրույցների մեջ շատ բան չափազանցված կարող է լինել և հարմարեցրած, սակայն պատմական հիմքեր անպայման ունեն։ Պետք է մտածել այն մասին, թե ինչու մեր ամրոցները կապվում են հատկապես Աշոտ Երկաթի հետ։ Չէ որ Տիգրանի, Արշակի, կամ Մամիկոնյան իշխաններից որևէ մեկի անվան հետ դրանք չեն կապվում, այլ միայն Բագրատունիների և այն էլ միայն Աշոտ Երկաթի հետ։ Դա բացատրել միայն նրանով, որ Աշոտ Երկաթը սիրելի է եղել ժողովրդին, ճիշտ չէ, քանի որ ժողովուրդը վերոհիշյալ գործիչներին պակաս չի սիրել։

Ինչպես իր տեղում տեսանք, ամրոցների դերը երկրի պաշտպանության գործում ուժեղանում է հենց Բագրատունյաց շրջանից սկսած։ Բագրատունի թագավորները, մինչև Աշոտ Երկաթը, չէին կարող բերդաշինության լայն գործունեությամբ զբաղվել, քանի որ արաբները դեռ երկրում էին և առաջին բանը, որին արգելք էին հանդիսանում, Հայաստանի բերդերի շինարարությունն էր[7]։ Միայն Աշոտ Երկաթը հնարավորություն ունեցավ արաբներին դուրս վռնդելու երկրից և զբաղվելու երկրի ամրացմամբ՝ ռազմական տեսակետից։ Իսկ երկրի ամրացումը նախ և առաջ նշանակում էր ամրացնել, վերանորոգել

7 Շատ փաստեր են հայտնի, որ արաբները ինչպես Հայաստանը գրավելու, այնպես էլ իրենց տիրապետության շրջանում բաղում ամրոցներ էին ավերում։

ամրոցները, զինվորական ուժը կարգի բերել։ Այդ է պատճառը, որ Աշոտ Երկաթը ամրացնում է ամբողջ երկիրը և այն դարձնում ռազմական ճամբար, այլ կերպ վարվել էլ չէր կարող։ Արաբների ներխուժման վտանգը անընդհատ կախված էր երկրի վրա և Աշոտ Երկաթը ամեն ինչ պետք է աներ երկիրը փրկելու համար։ Այդ է պատճառը նաև, որ նա կոչվեց Երկաթ, որի մասին հաղորդում է մեզ Ասողիկը։ Հետաքրքիր է նշել, որ Աշոտ Երկաթի ամրոցաշինության մասին ուղղակի նշում է Դրասխանակերտցին.

«...Գրեթէ իբրև զարծուի սաւառնաթև սլացեալ ընդ օդս, այնպէս սրավարեալ խոյանայր զկնի գիշատեալ այլազգեացն, որք ասպատակ սփռեալ տարածեալ էին ընդ երեսս երկրի մերում. և նախ քան զամենայն ինչ ի փոքր մի վայրկեան ժամանակի յինքն առհաւասարակ գրաւեալ նուաճէր զբոլոր իսկ ամրոցս տէրութեան հօր իւրոյ, զոր առեալ կալեալ էր ոստիկանին։ Եւ զորս միանգամ պահնակս անդ `ի Սառակինոսացն գտանէր՝ սուր սուսերի մաշէր. և պատուարօք և պահնակօք և բազում ռոճկօք զամուրսն ամրացուցեալ՝ և ինքն դէտ թշնամեաց կրթէր...»[8]։

Ինչպես տեսնում ենք, Աշոտ Երկաթը նվաճած ամրոցների արաբական զորքը կոտորում էր և կայազորով (պահնակօք), պարիսպներով (պատուարօք) և մթերքով (ռոճկօք) ամրացնում էր այն և ինքը հետապնդում էր թշնամիներին։ Բնական է, որ հարկ կլիներ որոշ վայրերում կառուցել նոր ամրոցներ։ Դրասխանակերտցու մոտ Աշոտ Երկաթի կողմից նոր ամրոցներ կառուցելու մասին խոսք չկա։ Սակայն պետք է հաշվի առնել, որ վերոհիշյալ հատվածը վերաբերում է Աշոտի իշխանության այն շրջանին, երբ նա դեռ ազատագրում էր Հայաստանը արաբներից։ Հայտնի է, որ Աշոտը երկիրը ազատագրելուց հետո 10 տարի էլ խաղաղ թագավորեց։ Հենց այս շրջանում է, որ նա շմոռանալով երկրի ապահովության մասին, կարող էր կառուցել նոր ամրոցներ։ Այս վերջին տարիների իրադարձություններին Դրասխանակերտցին, թեև ականատես էր, սակայն դրանք չի նկարագրել։ Պարզ է, որ Դրասխանակերտցուց չէինք կարող պահանջել, որ նա նկարագրեր դեպքերը մինչև իր մահը։

Արժե նշել, որ Աշոտ Երկաթին բացի բերդերից, ուրիշ կառույցների շինարարություն չի վերագրվում՝ ինչպես եկեղեցիների, կարավանատների, նույնիսկ կամուրջների և այլնի։

Ուրեմն, Աշոտ Երկաթը, ինչպես մենք Դրասխանակերտցու ուղղակի վկայությունից էլ տեսանք, պետք է ամրոցաշինական մեծ գործունեություն ծավալած լիներ, որ միայն նրան է մեր թագավորներից և գործիչներից վերագրվում ամրոցաշինությունը։

Մենք չենք պնդում, բայց հնարավոր ենք համարում, որ իր կյանքի վերջին տարիներին Աշոտ Երկաթը կառուցած կամ ամրացրած լինի Անբերդ ամրոցը։ Այդ բանը մեզ ավելի հավանական է թվում այն պատճառով, որ Արագածոտնը գտնվելով Շիրակի թագավորության արևելյան կողմում, պետք է ավելի խիստ ամրացվեր և առանձին հոգածության առարկա լիներ Աշոտ Երկաթի համար, քանի որ դեպի Շիրակ՝ Բագրատունիների մայրաքաղաքները (Բագարան, Երազգավորս, այնուհետև նաև Անի) թե՛ հարավային և թե՛ արևելյան կողմերից թշնամին անցնելու էր Արագածոտնով։ Այսպիսով, Անբերդի կառուցման ամենահավանական ժամանակը, մեր կարծիքով, X դարի սկիզբն է։

---

8 Դրասխանակերտցի, նշված աշխատությունը, էջ 243։

Ուսումնասիրողներից շատերը կամ չեն խոսել Անբերդի X դարից առաջ կառուցելու մասին, կամ այն համարել են X դարից հետո կառուցված։ Ճարտարապետ Թ. Թորամանյանը գրում է, որ դղյակը և պարիսպները հազիվ IX—X դարու գործ են երևում[9]։ Միայն ճարտարապետ, արվեստագիտության դոկտոր Ն. Տոկարսկին է, որ ենթադրում է, թե Անբերդը կառուցվել է VII դարում։ Նա իր «Архитектура Армении IV—XIV вв.» գրքում Անբերդը տեղադրում է V—VII դարերի ճարտարապետության բաժնում և գտնում, որ Անբերդը սկզբնապես կառուցվել է VII դարում։ Նա գրում է. «Անբերդ և Արխաշան լեռնային գետերի միացումից առաջացած հրվանդանի վրա VII դարում կառուցվել է Անբերդի բազմահարկ դղյակ-պալատը, որից այն կողմը, գետի միացման ժայռապատ հրվանդանի վրա տեղավորված է եղել ոչ մեծ բնակավայրը, որտեղ ապրում էին դղյակի սպասավորները։ Պալատը հետագա 6—7 դարերի ընթացքում մի քանի անգամ վերակառուցվել և ամրացվել է, իսկ հրվանդանի վրա աճող բնակավայրը պաշտպանելու համար կառուցել են նոր պարիսպները»։ Այնուհետև «բնակավայրը սկզբում զբաղեցնում էր հրվանդանի մի մասը, որը հարում էր պալատին. այն շրջափակված էր կիսակլոր աշտարակներ ունեցող քարակերտ պարիսպներով, իսկ Անբերդաձորի կողմից՝ պալատի ստորին մասում գտնվող դարպասով։ Կարելի է ենթադրել, որ դղյակի բնակիչները այստեղ ունեցել են եկեղեցի, որի ավերակները մինչ այժմ մնացել են հողի տակ»[10]։

Սակայն, ինչպես տեսանք, թե՛ հնագիտական նյութը և թե՛ պատմական տեղեկությունները նման տեսակետի օգտին չեն խոսում։

Ինչպես նշեցինք, Անբերդի մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է XI դարի սկզբին։ Վարդան Բարձրաբերդցին գրում է.

«Ի չորեքհարիւր քառասուն և չորս թուին մեռաւ Գագիկ տուեալ զթագաւորութիւնն երից որդւոց իւրոց՝ Յովհանիսի, Աբասայ և Աշոտոյ։ Զթագն տայ Յովհանիսի, և զԱնի և զՇիրակ, զսուրբ Գրիգորոյ Յորովն Աշոտաց. զԱնբերդ և զդաշտն Արարատեան, զԿայեան և զԿայծոն և Տաւուշ գաւառն Սեւորտաց. և զայլ մնացեալսն Աշոտի և Աբասայ բաժանէ»[11]։ Մեջբերածից երևում է, որ Գագիկ թագավորի ժամանակ Անբերդը շատ կարևոր ամրոց էր։ Այդ է պատճառը, որ Գագիկի մահից հետո այն անցնում է Հովհաննես-Սմբատին։

Մյուս գրավոր տեղեկությունն Անբերդի եկեղեցու հյուսիսային մուտքի վերևի արձանագրությունն է.

1. Ամին Նշե
2. Ես իշխանս Վահրամ շի
3. Նեցի գկաթողիկես աթոռ
4. Հայրապետական եւ սահման
5. Եցի պտուղն...[12]։

---

9 Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1948, էջ 174։

10 П. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, стр. 42, 44.

11 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 92։

12 Արձանագրությունը հրատարակված է Երվ. Տեր-Մինասյանի «Անբերդաձորի հնությունները» հոդվածում (տե՛ս «Էջմիածին», 1961, Ե., էջ 50—51)։ 1936 թ. աշնանային ամսվա ընթացքում արձանագրության լրիվ տեքստը արտագրել ու վերծանել են Ս. Բարխուդարյանն ու Կ. Վաղարշյանը։

Այնուհետև սահմանվում են Անբերդից, Արագածոտնից և այլ տեղերից գանձվող հարկերի չափը։

Արձանագրությունից երևում է, որ 1026 թվականին ավարտվում է Վահրամաշեն եկեղեցու կառուցումը։ Հավանաբար, Վահրամ Պահլավունին հեղինակ էր նաև Անբերդի այլ կառույցների։ Պետք է ենթադրել, որ Վահրամ Պահլավունին ամրացրել կամ վերանորոգել է ամրոցը, սակայն այն ժամանակ սովորություն չկար նման գործերի մասին խոսել արձանագրություններում[13]։

Առանձնահատուկ էր Պահլավունիների դերը Բագրատունյաց թագավորության մեջ։ Դժվար է ասել, թե որտեղ էին վերջանում Բագրատունիների տիրակալության սահմանները և որտեղ սկսվում Պահլավունիներինը։ Պահլավունիները հիմնականում բնակվում էին Անիում, սակայն նրանք տիրույթներ ունեին թե՛ Շիրակում, թե՛ Արագածոտնում և թե՛ երկրի այլ վայրերում։ Պահլավունիները Բագրատունի թագավորների ամենահավատարիմ իշխաններն էին, և իրենց ամբողջ ուժն ու եռանդը ներդնում էին երկրի ընդհանուր շահերի պաշտպանման գործին։ Այդ է պատճառը, որ Անբերդի նման խոշոր նշանակություն ունեցող ամրոցն էլ, ինչպես և երկրի պաշտպանության գործը ընդհանրապես, վստահվում էր նրանց։

Պահլավունիների դերը առանձնապես աճեց XI դարից սկսած։ Հովհաննես-Սմբատ և Գագիկ II թագավորների ժամանակ այն ավելի ուժեղացավ։ Հովհաննես-Սմբատի ոչ ռազմունակ և թուլամորթ լինելու պատճառով երկրի ռազմական գործի կառավարումը, ինչպես և իշխանության հետ կապված շատ հարցերի հոգսը ընկավ Պահլավունի իշխանների վրա։ Նրանցից հատկապես Վահրամ Պահլավունին աչքի ընկավ իր հայրենանվեր գործերով։ Այդ ժամանակ էր, որ ուժեղացավ բյուզանդական ազդեցիան։ Բյուզանդական կայսրերը տարբեր ճանապարհներով աշխատում էին գրավել Անին և վերջ դնել Շիրակի թագավորությանը։ Վահրամ Պահլավունու անվան հետ են կապված Անիի պարիսպների տակ հայ ժողովրդի տարած փայլուն հաղթանակները։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ Վահրամ Պահլավունին, մանավանդ կյանքի երկրորդ կեսում, Բագրատունյաց Հայաստանի ամենաազդեցիկ մարդն էր։ Բյուզանդական խարդախ քաղաքականությանը՝ երկրի իշխաններին պառակտելու և Բագրատունի թագավորներին հակադրելու ձգտմանը, նա հակադրեց սեփական հայրենիքի հավատարմության, երկրի բոլոր իշխաններին Բագրատունի թագավորների դրոշի տակ համախմբելու, ռազմական ուժերը մեկ ընդհանուր հրամանատարության տակ կենտրոնացնելու քաղաքականությունը։

Երկրի պաշտպանության համար խիստ կարևոր նշանակություն ունեին բերդերը։ Նա ամրացրեց Անին պաշտպանող բերդերի օղակը, որտեղ առանձնահատուկ դեր ուներ Անբերդը։ Վերջինս դարձավ Պահլավունու հատուկ հոգածության առարկան։

Դրանից մի քիչ անց Անբերդում տեսնում ենք նաև Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն, որին տեսակցության է գալիս Սարգիս Վարդապետը «...առաքեալ ի մանկամիտ արքայէ...»[14]։ Մանկամիտ արքան, հավանաբար, Գագիկ II-ն էր, որի հետ այդ ժամանակ գժտված էր Մագիստրոսը, և Սարգիս վարդապետին ուղարկում է նրա սիրտը շահելու համար։

---

13 Այդ սովորությունը հանդես է գալիս հետո՝ XII—XIII դարերից սկսած։

14 «Գր. Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 65։

Այս դեպքից շատ չանցած, 1045 թ. Գագիկ II-ը կանչվում է Կոստանդնուպոլիս։ Մոնոմախ կայսրը նրան ստիպում է հրաժարվել Անիից։

Սակայն պայքարը Անիի համար շարունակվում էր։ Անեցիները փորձում են այն հանձնել վրաց Բագրատ Դ թագավորի մորը։ Այս մասին հետաքրքիր տեղեկություն է պահպանել XI դարի վրաց անանուն ժամանակագիրը. «Ապա կրկին հզորացավ և ուժեղացավ իր «հայրենիքում» Բագրատ վրաց թագավորը։ Եվ Բագրատի բախտը բանեց թե ոչ՝ Վեստը (նրան) միացավ Անվո ինն բերդերով, բացի Անբերդից։ Եվ անեցիք տվին Անին Բագրատի մորը, քանի որ այն հայերի «հայրենիքն» էր, իսկ Բագրատի մայրը՝ Մարիամ թագուհին, հայոց Սենեքերիմ թագավորի դուստրն էր»[15]։

Հետաքրքիր է, որ Վեստ Սարգիսը, որը վարում էր բյուզանդամոլ քաղաքականություն, Անին և նրան շրջապատող բերդերը հանձնում էր վրացիներին։ Տվյալ դեպքում մեզ համար ամենից կարևորը Անբերդի հարցն է։ Նախ, պարզվում է, որ Անբերդը Անիի 9 կամ 10 բերդերից մեկն էր։ Բացի այդ, այն միակ բերդն էր, որ չհանձնվեց վրացիներին։ Դա պետք է բացատրել, նախ, Անբերդի անառիկությամբ։ Անբերդցիք վստահ էին իրենց ամրոցի վրա։ Բացի այդ, այդ ժամանակ պետք է Անբերդ տեղափոխված լիներ Վահրամ իշխանը, որը, հավանաբար, ոչ միայն Անբերդը, այլև ամբողջ Հայաստանը որևէ մեկին հանձնելուն դեմ էր։

Հավանաբար, Անբերդը մնաց Վահրամ Պահլավունու ձեռքում մինչև նրա մահը, որը տեղի ունեցավ 1048 թվականին Ռվնո պարիսպների տակ։ Նրա հետ զոհվեց նաև որդին՝ Գրիգորը։

Սրանից հետո Անբերդի, ինչպես և Հայաստանի շատ վայրերի բախտը անորոշ էր։ Բյուզանդացիք շուտով տիրեցին Անիին։ 1046 թվականին Գրիգոր Մագիստրոսը Բջնին հանձնել էր բյուզանդացիներին։ Բյուզանդացիք տեր դարձա՞ն Անբերդին։ Անհայտ է։ Այս անհաստատ վիճակին շուտով վերջ դրին սելջուկները, որոնք Անբերդը գրավելով դարձրին իրենց կարևոր հենակետերից մեկը։

С. В. АРУТЮНЯН

АНБЕРД В X—XI ВВ.

Резюме

В статье рассматривается Анберд, как одна из мощных крепостей средневековой Армении. Находясь на восточных границах Багратидского царства и входя в состав оборонительной системы района Арагацотн, Анберд в X—XI вв. служил преградой при нашествии арабов со стороны Атрпатакана через Араратскую долину на Ширак. Этим и объясняется особая забота князей Багратидов и Пахлавуни о дальнейшем укреплении крепости.

Далее затронут вопрос о существовании Анберда до X века. Отсутствие археологического материала (до X в.) и исторических данных не дает основания утверждать о существовании Анберда до X века. Учитывая это, а также местонахождение крепости, автор полагает, что Анберд до X века либо не существовал, либо существовал как обыкновенное поселение.

15 «Վրաց անանուն ժամանակագիր» (XI դար) (տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները հայերի մասին, հ. I, էջ 205—206։